կ'սպանիս վերջացրցիս, եա մինք մի տնիր կ'աւիրինք, էրթանք»։

Մսրամելիք զթուր քեշից վեար Դաւթին, էսաց.—Տ'սպանիմ, իմ խաց ջիւր կուրուսից, իս մէկ հէթըմ տղի յաբով մէկ քեաղաք չըմ աւիրի։

Մէր էլաւ դէմ կանգընաւ.—Պտի չ'սպանիս։

—Ինէ նավէ[1]), տ'սպանիմ։

Մէրն էսաց.—Էդիկ ֆէմ չ'էնի, էրեխայ ի, էդու սպանիլ մեխք ի։

Մսրամելիք էսաց.—Տղայ չի, խելք կ'խասնը, ամա խաստակուղ ի, կաստը[2]) կ'սպանը։

—Ա՜յ որտի, որ կաստի ի, ըլնինք բիրինք, փորձինք։

Էսաց.—Մարէ, ինչխ տը փորձինք։

Էսաց.—Խլիսուն իս կ'ըլնիմ մէկ չանախ[3]) կրակ կ'լցնիմ, մէկ ոսկի. կ'դնինք յեռջիւ տղին, թի ձեռ էտու, ոսկին առից՝ խելքեով ի, սպանը, թի որ կրակ առից՝ տղայ ի, խելք չ'կտրը։

Խլիսուն էլաւ, իպի զկրակ ըզոսկին իտի յեռջիւ. տղէն իրիշկից[4]), տեսաւ էրկու բան կ'պսպղայ, ձեռ պարզից ըզոսկին պտի վիրուցէր, Աստծու հրամանքիւ կրակ կպաւ մատ, մատ քեշից իտի բերան, լեզուն էրիցաւ, թլոր[5]) էլաւ, անուն դրին Թլոր Դաւիթ։

Մէր էսաց.—Ո՞ւրտի, տիւ տեսա՞ր, որ տղայ ի, ֆէմ չ'էնի։

Մսրամելիք էսաց.—Աբա ինչ բան էնինք խիտ։

Մէր էսաց.—Ինչ կ'երթաս հոլ կ'խաղաս, քիւ ախպէրն էլ տար էնդի խաղ էնա, քիւ աչք պախը վերայ, որ խատ տղէնեբուն կուիւ չ'էնի։

Էսաց—Մարէ, խատ ձի կ'տանիմ, ամա զինք խաստակուղ ազգ ի, վախանամ մէկ պատիճ[6]) բիրի մեր գլեոխ։

Մէր շատ աղաչից.—Քենէ մուննաթ[7]) ըմ կ'էնիմ, քիւ ախպէր խիտ տանիս։

---

[1]) Անկարելի է։ [2]) Դիտմամբ։ [3]) Աման։ [4]) Նայեց։ [5]) Թլուատ։ [6]) Պատիժ։ [7]) Խնդիրք, աղաչանք։